ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1962 Общественные науки

Ն. Ծ. Պապուխյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ

Հայկական ժողովրդական ճարտարապետությունն իրրև շինարարական արվեստի առավել հին դրսևորումներ պարունակող բնագավառ սկսում է ավելի ու ավելի մեծ ուշադրություն դրավել, զգալի է դառնում նրա նշանակությունը ժողովրդական արվեստի պատմության և առհասարակ մշակույթի համար։ Հայկական ժողովրդական ճարտարապետության սիստեմատիկ ուսումնասիրումը, հետևարար, պետք է դիտել որպես հրատապ մի խնդիր։

1959 թվականին Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը ձեռնամուխ եղավ հայկական ժողովրդական ճարտարապետության հուշարձանների սիստեմատիկ ուսումնասիրությանը և առաջին հերթին նրանց ֆիքսացիային՝ գիտական փաստաթղթեր հանդիսացող չափագրությունների միջոցով։

Ներկա հոդվածում ընթերցողին ներկայացվում է Սևանա լճի առափնյա վայրերից՝ Կամոյի, Մարտունու ու Բասարգեչարի շրջանների ժողովրդական ճարտարապետությանը վերաբերվող հետազոտական տվյալներ։

Լճափնյա այդ շրջանները բաղկացուցիչ մասերն են եղել անցյալում Նոր Բայազետի և հնում Այունյաց նահանգի Գեղարքունիք և Սոդ կամ Սոթք գավառների։ Նրանց մշակույթի հարուստ պատմությունը հասնում է նախապատմական դարերը։

Դժվար է սակայն խոսել մինչև XIX դարն ընկած ժամանակաշրջանի ժողովրդական ճարտարապետության մասին, քանի որ նյութական տվյալները պարբերաբար ոչնչացվել են ասպատակումների և ավերիչ պատերազմների հետևանքով։

XIX դարում գալիս են բազմաթիվ գաղթականներ Բարձր Հայքի տարբեր կողմերից և վերակենդանացնում գրեթե ամայացած այս վայրերը։

Հայ գյուղի կազմավորման ու զարգացման պատկերն իր նյութական հետքերն է թողել հին բնակավայրերի՝ պատմության դիրկն անցնող մնացորդների վրա։ Այս տեսակետից ուսումնասիրվող շրջանները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում։ Նկատելի է բնական-կլիմայական, քաղաքական-պատմական, սոցիալ-տնտեսական պայմանների ու տեղական ավանդությունների անմիջական ազդեցությունը այդ բնակավայրերի կառուցապատման և առհասարակ ճարտարապետական դիմագծի վրա։ Նրանց մենք տեսնում ենք լճափնյա հմայիչ տեսարանների մեջ, արևահայաց լեռնալանջերին, երբեմն ցուրտ քամիներից պաշտպանված ձորերում և այլ վայրերում, որտեղ դյուրամատչելի ճանապարհներ կան։ Բնակավայրի ընտրության համար վճռական նշանակություն է ունեցել նաև ջրի առկայությունը։

Գրեթե բոլոր գյուղերը բազմատեսակ, կիսագետնափոր կառուցվածքների խիտ դասավորությամբ ստեղծված հոծ զանգվածներ են եղել, մասնատված ըն-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

դամենը մի քանի բավիղներով։ Ցածրադիր կավաշաղախ, քարե ծուռումուռ պատերի, քարակույտերով կազմված ցանկապատերի և փոքր մուտքերի անվերջ մի շարան կարող էր տեսնել անցորդը գյուղի փողոցներում։

Հարակից կտուրներով կազմված անհարթ տարածության տակ պարփակված կառույցների զանգվածը բաղկացած է եղել առանձին բնակելի կոմպլեքսներից, որոնք իրար հետ միացված են եղել ակնատ կոչված հատուկ անցքերի միջոցով։

Նոր Բայազետի մոտ հարթ վայրերում եղել են ավելի նոսր կառուցապատված բնակավայրեր՝ կիսագետնափոր կառուցվածքներով։ Միայն ուշ ժամանակներում սկսել են բնակելի կոմպլեքսները գետնի երեսին կառուցել, երբ ընդհանրանում էր նոր տիպի, հարթածածկ սենյակների ու շենքերի կառուցումը։

Սովորաբար բնակելի կոմպլեքսից ոչ հեռու, երբեմն անմիջապես կից, շինվել է արտադրական կառուցվածքն ու արհեստանոցը (ձիթհան, պայտարանոց, դարբնոց և այլն)։

Պետական դպրոցը, գյուղական դատարանը, եթե այդպիսիք եղել են, բազիլիկատիպ, ճարտարապետական տեսակետից ոչ ուշագրավ եկեղեցիները կառուցվել են մեկուսի։

Բնակելի կոմպլեքսի հատակագիծը բարդ չի եղել։ Հիմնականում տնտեսական կարիքների համար օգտագործվող փոքրիկ մի բակի վրա է բացվում բնակելի կոմպլեքսի միակ ցածրիկ մուտքը, որից մտնում են կոմպլեքսի առանձին մասերը միավորող մի փակ նախասրահ (տեղական բարբառով սրահ), որը ներքին բաժանմունքների դասավորության շնորհիվ ստացել է երկար միջանցքի տեսք։ Նախասրահը պաշտպանում էր կոմպլեքսը վատ եղանակի անմիջական ազդեցությունից, իսկ նրա թումբ կոչվող բարձրադիր մասը, հաճախ խորացված ամբողջ պատի կամ նրա մի մասի մեջ, ծառայում էր որպես իրերի և գործիքների պահեստ։ Լինելով շրջապատից համեմատաբար մաքուր տեղում՝ այն երբեմն ծառայում էր նաև նստելու և այլ կենցաղային նպատակների համար, բայց կան բնակելի կոմպլեքսներ, որոնք այս թումբը չունեն։

Սրահի խորքում բացվում են դռմի ու փարախի (ոչխարի դռմ) դռները, իսկ առաջին մասից բացվում է օթախ կոչվող հարթ ծածկով սենյակի դուռը։ Այդ սենյակի լուսամուտներ ունեցող ճակատը պարտադիր կերպով դեպի բակ պետք է ուղղված լիներ։ Տան, մառանների ու մարագների (քիլարների) դռները գտնվում են սրանց միջև։ Երբեմն մառանի մուտքը բացվում է ուղղակի տան մեջ։

Կոմպլեքսի համադրվածքային և հարդարման գլխավոր շեշտը դրված է եղել գլխատան վրա, որն ընտանիքի կամ գերդաստանի հիմնական պատսպարանն էր, որը ուղղակի կոչվել է տուն (նկ. 1, 2)։

Ինչպես կոմպլեքսի այլ բաժանմունքները, գլխատունը ևս կիսագետնափոր կառուցվածք է և իրենից ներկայացնում է ուղղանկյուն մի սենյակ, որի ամբողջ ծածկը կամ նրա կենտրոնական մասը, ուղղանկյուն կամ բազմանիստ հիմքով փայտե գերանների խաչմամբ ստեղծված աստիճանաձև մի թաղ է՝ գմբեթաձև կամ հատած բրդի նման և բարձրանում է սյունների կամ ուղղակի պատերի վրա։ Հարակից կտուրների մեջ արտաքին պատերը չեն երևում. ճամբեղբին միայն վերին փոքր մասով են գետնից դուրս ցցվում։

Ծածկի գերանաշարքերի գագաթային մասի քառակուսի բացվածքի վրա դրված հատուկ շրջանակով կազմվում է երդիկը, որի համապատասխան փոր-

վածքի մեջ է նստում ապակեպատ շրջանակը։ Անվտանգության համար այստեղ ամրացված է լինում խաչերկաթ[1] կոչվող ցանցը։

Գլխատան պատերը ներսից սովորաբար սվաղված են լինում և սպիտակեցված. նրանց մեջ են բացվում ծալքատեղ կոչված մեծ որմնախորշը, որ նախատեսված է անկողնու պարագաների համար, մի քանի, երբեմն փեղկերով ծածկված պահարանախորշեր (տեղական բարբառով պատրհաններ) և դանձախորշեր։ Վերջիններս պատի մեջ տեղավորված կավե անոթներ (կճուճներ) են, որոնք դրված են հորիզոնական դիրքով և դեպի դուրս ուղղված բացվածքով։ Դանձախորշերը ծառայել են սակավապետ գյուղացու հարստությունը թաքցնելու համար (անցքը փակվել է և դրսից սվաղվել)։



Նկ. 1. Բնակելի կոմպլեքս (առաստաղ, կտրվածք)

Գլխատան հատակը հողից է, երբեմն ծեփված հարդախառն կավե թանձր շերտով։ Նրա կենտրոնական մասում տեղավորված է թոնիրն իր օդատար ակով։

Այստեղի գլխատաններում հանդիպում են բարձրադիր խորշեր՝ առաջից սյուներով, որոնք հանդիսացել են առագաստի բաժանմունքներ նորապսակների համար։ Այդ մասին են վկայում նաև Մեսրոպ եպ. Սմբատյանցի[2], Ե. Լալայանի[3] և Ս. Լիսիցյանի[4] տեղեկությունները։ Վարագույրով (փարդով) ծածկվող նման խորշի բացակայության դեպքում վարագուրվել է տան մի անկյունը։

1 Խաչերկաթ է կոչվել նաև թոնրի վրա դրվող խաչաձև երկաթը։

2 Մեսրոպ եպ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծավարդ գաւառի, Վաղարշապատ, 1895։

3 Ե. Լալայան, Նոր Բայազետ Գավառ, «Աղգագրական հանդես», 18-րդ գիրք, Թիֆլիս, 1908։

4 С. Лисицян, Нор-Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов Памбакского и Даралагязского. «Известия» Кавказского института археологических исследований, том VI.

Հայաստանի շատ շրջաններում թոնրատունն առանձնացված է եղել գլխավոր սենյակից կամ բարձրագիր արտիզի նման և կամ առանձին սենյակի տեսքով[5]։ Սևանի առափնյա շրջանների հին բնակարաններում, սակայն, մեզ չհաջողվեց գտնել այդպիսիք, բացի մեկից (Զոլաքար գյուղում)։ Տան անկյուններից մեկում համապատասխան խորշը թեև ունի հազարաշեն ծածկ, չի ծառայել որպես հացատուն։ Չկան թոնրի կամ օջախի հետքեր և տնատերի վկայությամբ այնտեղ է եղել առագաստը և ընտանիքի ապրելարանը։ Հետևաբար այդ շրջանների համար առանձնացված թոնրատունը բնորոշ չի եղել։

Նկ. 2. Գլխատան թոնրերը

Գլխատան տաքացումը կատարվում է միայն թոնիրների միջոցով։ Յուրաքանչյուր տանը եղել են մեծ և փոքր թոնիրներ՝ հացի, ճաշի ու ջեռուցման համար։ Հետաքրքիր է տարանալու այն նախնական եղանակը, որ բուրսի է կոչվում։ Դա լինում է հետևյալ կերպ. թոնրի դեռևս չհանված և չրոցավորված կրակը պահպանելու համար, թոնրի ակը փակում են մի շորով (ակնկալ) և այ-

5 Նույն տեղում։

նուհետև թոնրի վրա են դնում ցածր սեղանաձև քուրսին, որը ծածկում են մի մեծ վերմակով և մտնում տակը այնպես, որ իրենց ոտքերն իրար չդիպչեն։ Ծուխը կտրվելուց հետո երդիկը փակում են։

Բնակարանների կահավորումը արտահայտել է կենցաղի պարզությունը։ Պատերի տակ շարված փայտե մի քանի թախտ, այլուրի շտեմարան (ամբար), մի փոքրիկ սեղան, մի քանի արկղ, սենյակի մի անկյունում տեղավորված ամանեղենն ու անկողնի պարագաները (եթե դրանք չեն պահված ծալքատեղում)— այս է ամբողջը։ Հագուստեղենը պահվել է արկղներում, կախվել սյուներից և կամ փռվել նրանց վրա ամրացված հորիզոնական ձողափայտերի վրա։ Տեղ-տեղ հանդիպում են ձողի վրա ամրացված հատուկ կախարաններ, որոնք կարող էին տեղափոխվել։ Սյուներից կախել են նաև զարդաքանդակված փայտե թալիսմաններ, ճրագակալներ և աղամաններ։

Տունն ընդհանրապես գերդաստանի կամ ընտանիքի հավաքավայրն է հանդիսացել, այնուամենայնիվ տղամարդիկ հաճախ են առանձնացել գոմերի սենյակներում (օդաներում), մանավանդ երբ տղամարդ հյուրեր էին եղել (օտարականին տուն չէին տանում, այլ բերում էին գոմի սենյակ. այնտեղ էլ նա պետք է դիշերեր)։ Հավաքույթների ժամանակ գլխատունը դարձյալ կանանց առանձնարանն էր, մինչդեռ տղամարդիկ հավաքվում էին գոմի սենյակում կամ նույնիսկ նախօրոք մաքրված գոմում։ Հարսանիքների ժամանակ ամբողջ տունն ստանում էր տոնական տեսք (տանը և գոմում փռվում էին խսիրներ, թաղիքներ (քեչա) և գորգեր, իսկ տան առաստաղը զարդարվում էր ալրաթաթախ շորի ծաղկաձև զարդերով)։

Տաք եղանակներին ցերեկային հավաքավայրեր են եղել կտուրներն ու բակերը, իսկ երեկոյան դարձյալ պատսպարվել են գլխատան և գոմի օդայի ներսում։ Բերև մահճակալ գործածվող թախտերը միայն գերդաստանի պատվավոր անդամներին են հատկացրել, մինչդեռ մյուսները ընտանիք առ ընտանիք զբաղեցրել են գետնի մի փոքր տարածություն, որտեղ հաստ թաղիքների վրա անկողնու պարագաներն էին գցվում, իսկ նրանց կից գրվում էր երեխայի օրորոցը։

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում գլխատան ծածկի կոնստրուկցիան, որը լինում է գերանաշարքերի ուղղանկյուն, հաղարաշեն և խառը կառուցվածքով (նկ. նկ. 3, 4, 5)։

Առաջինն ստեղծված է զույգ առ զույգ՝ իրար զուգահեռ գերանների փոխադարձ ուղղահայաց դասավորությամբ և իրար վրա ազատ հենվող գերաններով, որոնց միջակայքերը դեպի վեր աստիճանաբար նեղանալով՝ կազմում են բրգաձև մի ծավալ (տեղական բարբառով կուբա)։ Սյուների վրա հենվող ստորին երկու մայր գերանները «բոյի գերաններ» են անվանվում և ծայրերով հաճախ հենվում են պատերի վրա, իսկ վերին գերանները խաչուկներ են կոչվում։

Մայր գերանների վրա երբեմն լինում են գերանախոպեր կոչվող գերաններ, որոնք դրված են գերանների երրորդ շարքի փոխարեն. ընդունելով հաջորդ շարքի բեռը՝ նրանք այն հենակետերից փոխանցում են սյուներին և, միջանկյալ միջադիրների միջոցով, մայր գերանների միջնամասերին։ Այսպիսի կառուցվածքով գլխատներ հանդիպում են առավելապես Կամոյի շրջանում, ուշագրավ նմուշներ կան այս շրջանի Գեղարքունիք, Հացառատ և Կարմիր գյուղերում։

Երկրորդ տիպի կառուցվածքն ստեղծվել է գերանաշարքերի՝ սենյան տակ փոխադարձ հատումից առաջացած բազմանիստ դասավորությամբ, դեպի վեր նեղացող ծավալով, ընդ որում առաջացած եռանկյունաձև և սեղանաձև բաց

տարածությունները՝ դերանների եռևում, ծածկվել են փոքր դերանների խիտ շարքով։ Ստորին շարքերում կոնստրուկցիայի թեթևության և դերանների խնայողության համար հիշյալ սեղանաձև մասերը հաճախ ծածկվել են թեքադիր ճյուղերով կամ ճեղքված փայտով։

Լճափնյա շրջաններում, առավելապես Մարտունու և Գասարդեչարի գյուղերում, այս տիպի կառուցվածքն ավելի մեծ խնամքով ու ճաշակով է հանդես գալիս, քան առաջինը, մանավանդ առանձին մասերով զարդարված տարրերակներում։



Նկ. 3. Հասարակ, բրգաձև ծածկով գլխատուն (առաստաղ և կտրվածք)

Նկ. 4. Հաղարաշեն ծածկով գլխատուն (առաստաղ և կտրվածք)

Երրորդ տիպն ստեղծվել է հիշյալ սխեմաների համատեղումով, ընդ որում ստորին մասը կազմվել է հաղարաշենի սկզբունքով, իսկ վերին մի քանիսը՝ ուղղանկյուն դասավորությամբ։

Վերջին երկու տիպը, մանավանդ երկրորդը, ամենից շատ է գործածական եղել. այլապես գլխատունը չէր կարող ունենալ մի ամբողջ գերդաստան տեղավորելու չափ մեծություն։ Այսպիսի մեծ գլխատներն ունենում էին մինչև 8-ից 12 սյուն, որոնց վրա բարձրանում է ծածկի կենտրոնական մասը։

Ծածկերի վերոհիշյալ տիպերի տարբերակներ կան, որոնք սերտորեն առնչված են ստորին գերանների հենման հետևյալ սիստեմների հետ. ա) հենում պատերի վրա ուղղակի կամ առորմների միջոցով (առորմին պատի կամ նրան կից սյուների վրա դրված գերանն է). բ) հենում պատերին կից սյուների վրա՝

առորմների միջոցով. գ) հենում մասամբ պատերի կամ նրանց կից սյուների և մասամբ առանձին կանգնած սյուների վրա. դ) հենում առանձին կանգնած սյուների վրա։

Այս սիստեմները կիրառվել են շինությունների և ծածկվող թռիչքի մեծությանը համապատասխան, ընդ որում առաջին սիստեմից մինչև վերջինը անկայուն պատը բեռնաթափելու և ներքին տարածությունը մեծացնելու ավելի ու ավելի մեծ հնարավորություն է նկատվում։



Նկ. 5. Խաչ տիպի ծածկով գլխատուն (առաստաղ և կտրվածք)

Ծածկի կաղնեփայտե գերանների վրա լինում են իրար վրա դասավորված հետևյալ պաշտպանիչ, ջերմամեկուսիչ և անջրանցիկ շերտերը. 2—5 սմ հաստությամբ տախտակներ, ճեղքված գերաններ և կամ ճյուղեր, որոնք փարդու են կոչվում, նրանց վրա եղեգ, խսիր, չոր խոտ և կամ ծղոտ, այնուհետև բելում (ձիթհանի թափթփուկ) և դարման (հարդ), ապա տուփանված հողի շերտ, որը փռվում է ջրով շաղախված վիճակում։

Գլխատների կոնստրուկտիվ մանրամասները ևս հետաքրքիր մշակումներ ունեն (խոյակներ՝ բարձեր, սյան վերադիրներ՝ թևեր, քարե խարիսխներ՝ սընբարներ, զանազան հենակներ և պահունակներ), որոնք կիրառվել են ուժերի փո-

խանգումները հեշտացնելու, առանձին մասերը բեռնաթափելու և ընդհանուր կայունությունն ապահովելու նպատակով։

Այան քարե խարիսխների նմուշներ շատ քիչ են հանդիպում. եղածներն էլ կոպիտ են մշակված։

Փայտե սյուների մշակումը կատարվել է մեծ խնամքով և բազմազան. նրանք լինում են բոլորաձև կամ բազմանիստ կտրվածքով, վերևում, վերադիրների միջոցով կամ առանց նրանց լայնացող մասով, վերին մասում լայն, առանց խոյակի՝ համապատասխան փորվածքով, դերաներ պահելու համար։

Հետաքրքիր մշակումներ ունեն խոյակները, որոնք այստեղ բարձ են կոչվում. նրանք վերևից երկարությամբ ձգված փոսիկ ունեն դերանի համար և ներքևից՝ կիսաշրջանաձև, աղեղնաձև, եռանկյունաձև, սղոցաձև և այլ փորվածքներ (թարթափներ)։

Խիստ ուշագրավ կոնստրուկցիա ունի թեքադիր հենակը, կամ այսպես կոչված «ծագ սուն»-ը, որն ամրացվում է սյան վրա և իր ներքևի մասով խորանալով նրա մեջ բեռնաթափում է այն դերաները, որին պահում է և արդելք հանդիսանում վտանգավոր ճկվածքի։ Այդպիսի հենակներն ունեն ուղղանկյուն, բաուկուսի, բազմանիստ, ոսմրաձև, եռանկյունաձև, շրջանաձև, կիսաշրջանաձև, ձվաձև, զսպանակաձև, սղոցաձև և դծիկավոր զարդափորվածքներ։ Պատահում են սեպաձև կամ աղեղնաձև խոյակներ ունեցող այդպիսի հենակներ։

Շինությունը ավելի կայուն դարձնելու նպատակով հաճախ հենակի վերևից, դերանի տակ դրվում է մի ծայրով պատի մեջ խրված, դրեթե հորիզոնական մի պահունակ, որը թեթևացնում է հենակի աշխատանքը. նրա ազատ ծայրն ընդհանրապես մշակվում է կլորացվելով, մի քանի փոսիկներով ու խազերով կազմված զարդաձևերով։ Այս ազատ ծայրի վրա երբեմն հենվում է մի նոր հենակ և կամ համապատասխան պահունակով և հենակով սիստեմ, դարձյալ զարդաքանդակված։ Վերջինս բեռնաթափում է հաջորդ դերանը։

Պահունակներով հենակները լայն տարածում ունեն Բասարգեչարի շրջանում։

Բնակելի կոմպլեքսի մեջ զգալի ծավալ են գրավում դոմերը (տեղական բարբառով՝ թավլեները կամ թալվանները) (նկ. 1). դրանք երկարությամբ ձգված՝ միջին լայն և կողքի նեղ թևերով, եռանավ, փակ սյունասրահներ են օրորոցաձև ծածկով։ Նրանց երկարությունը (խորությունը) համեմատական է անասունների գլխաքանակին. դրան համապատասխան էլ լինում է միջսյունային տարածությունների թիվը (յուրաքանչյուր անասունի հատկացնում են մեկ միջսյունային տարածություն)։ Նման կառուցվածք ունեն նաև փարախները (ոչխարի դոմ), միայն սրանք լինում են ավելի փոքր չափերի։

Անասնանոցները լուսավորվում են կտուրների մեջ բացված երդիկներից. դոմերի երկարությամբ ձգվում են վերևից բարակ եղերված քարաշար մասուրները. սալարկված, զոդավոր կամ երկթեք հատակի միջին մասով ձգվում է աղբափոսը, իսկ դռան մոտ դրվում է գոտը՝ անասունների քարե ջրամանը։ Հաճախ քարե պատով կամ ցանկապատով փոքր բաժանմունքներ են առանձնացվել ոչխարների ու հավերի համար, իսկ պատերի զանազան մասերում թողնվել են ճրագախորշեր (ճրագատեղեր)։ Որոշ դոմերում փորված են ջրհորներ։

Ցուրտ եղանակների համար նախատեսված յուրօրինակ մի կացարան էր դոմի սենյակը (օդան)։ Այն մուտքի մոտ՝ ոչ շատ բարձր պատնեշներով մասամբ մեկուսացած դոմի մի անկյուն էր կամ պատի մեջ խորացած մի սենյակ,

որի մուտքի կողմի պատը պատնեշված էր ոչ մեծ բարձրությամբ (նկ. 1)։ Այդ սենյակը գոմից ոչ լրիվ մեկուսացած լինելու հանգամանքը նպաստում էր գոմի տաքացած օդի ներհոսմանը։ Այստեղ երկայնական պատերի տակ թախտաձև՝ քարով ու կավով շարած թմբեր կան, որոնց անվանում են սաքու (որոշ գյուղերում սաքու են անվանում ամբողջ օդան)։ Դրանց միջև մի նեղ միջանցք դեմ է առնում պատի մեջ կառուցված բուխերիկին (բուխարի)։ Երկար կողմի խուլ պատի մեջ գրեթե միշտ ճրագատեղ (ճրագատեղ, պատրհան) է լինում։ Լուսավորումը կատարվում է սեղանաձև (տրապեցաձև) ծածկի միջնամասում, մուտքի կողմի ընդլայնական պատի վերին մասում բացված թեքադիր լուսամուտի միջոցով։

Հնում, երբ ապակի չէր ճարվում, լուսավորության համար ծածկի մեջ վերևից փակվող անցքեր էին թողնում։

Տոմերի ծածկի հարդարմանն ու կոնստրուկտիվ մասերի կառուցման մեջ չի ցուցարերված այն բծախնդրությունն ու խնամքը, որին հանդիպում ենք գլխատունը կառուցելիս (գերանները և սյունները փայտի ոչ դիմացկուն տեսակներից են և դասավորված պակաս խնամքով և առանց մշակման)։

Սռանավ այս փակ սյունասրահների օրորոցաձև ծածկի գերանները դասավորված են հետևյալ կերպ. սյունաշարքերի առաջին սյունների վրա, ընդլայնական ուղղությամբ, այսպես կոչված, վգի գերաններն են դրված. այս գերանների միջև սյունաշարքը փորը ինչ բարձրանում է կրելու համար երկարությամբ դրված հորիզոնական (բոյի) գերանները, որոնց ծայրերը հենվում են հիշյալ ընդլայնական գերանների վրա։ Երկայնական ուղղությամբ դրված այս գերանների վրա դարձյալ երկու ընդլայնական (վգի) գերան են դրվում առաջիններից դեպի կենտրոն դպալի շեղումով։ Այնուհետև կարող են դրվել դարձյալ մեկ կամ երկու ընդերկայնական գերան, որոնք վերեակ են կոչվում։ Մեկական գերան է դրվել նաև մսուրների եզրափայտի վրա բարձրացող սյունաշարի վերևից՝ իբրև լրացուցիչ հենարան ծածկի ճյուղերի թեք մասերին։ Մսուրի եզրափայտը կայունացնելու նպատակով նրանից դեպի սյուներն են դրում և մեխերով ամրացնում հորիզոնական ձողափայտեր, որոնք նպաստում են անասուններին իրարից մեկուսացնելուն։ Խիստ երկար գոմերն ունենում են օրորոցաձև սիստեմով կառուցված ծածկերի մի քանի հատված։ Շինափայտի խնայողության համար երբեմն վերեակներն ու նրանց հենարան ծառայող ընդլայնական գերանները չեն դրվում։

Գոմի սենյակի ծածկը սեղանաձև է, ընդ որում նրա բեկված մասերն անմիջապես նստում են երկու գերանների վրա, որոնք ձգված են սենյակի երկարությամբ։ Կիսապատնեշված մասերում սյունահենձանային սիստեմներ են լինում, որոնք երբեմն կառուցվում են խնամքով։ Բր փայտյա զարդամասերով աչքի է ընկնում բուխերիկի պատը։

Գոմպլեքսի մյուս բաժանմունքների ծածկերը լինում են հարթ կամ երկթեք։ Առաջինը կազմվում է հորիզոնական գերանաշարքի վրա դրված ծածկի այն էլեմենտներով, որոնք հիշատակվեցին իբրև գլխատան ծածկաշերտեր։ Երկթեք կոնստրուկցիան առաջանում է ծածկագերանների թեք դասավորությամբ՝ երկայնական պատերի և նրանց միջև դրված գերանի վրա։ Վերջինիս թռիչքը եթե մեծ է, տակից մի սյուն են դնում։

Տար եղանակներին օգտագործվող հեռավոր արոտավայրերում (սարերում) գյուղացիներն ունեցել են ժամանակավոր օգտագործման համար նախատեսված շենքեր, որոնք իրենց կառուցվածքով նման են բնակավայրերի համապա-

տասխան շինություններին (գլխատներին, գոմերին և այլն), միայն անհամեմատ նախնական ձևով և պատրաստված ոչ մեծ խնամքով։

Գլխատան կոմպլեքսի արտաքին պարզությանն ու անշքությանը հակադրվում է նրա ներքին ճարտարապետական բավականաչափ ուշագրավ կառուցվածքը. թեպետ շատ դեպքերում խիստ նախնական, այնուամենայնիվ այն իր մեջ պարունակում է հետաքրքիր առանձնահատկություններ, որոնք, շատ հետազոտողների կարծիքով, փոխանցվել են մոնումենտալ ճարտարապետությանը։

Ժողովրդի կենցաղը բնորոշող հնատիպ կառուցվածքներ պետք է համարել նաև ձեթի մշակման արհեստանոցները՝ ձիթհանները կամ սրանոցները, որոնք տեղական բարբառով «ձիթխաց» են կոչվել։ Մենք չափագրել ենք Ղարանլուղ գյուղում վերջին տարիներին հայտնաբերված մի ձիթհան, որն ամբողջությամբ գետնափոր է։ Քառակի վրայի արձանագրության համաձայն այն կառուցել է ոմն Ավանես 1657 (ՌՃԶ) թվականին։

Ձիթհանի մուտքն արևելքից է. մի պանդուսով և թեք միջանցքով իջնում են նրա առաջին բաժանմունքը, որտեղ կատարվում է կտավհատի մշակումը. խորքում մամլման բաժանմունքն է։ Մուտքի մոտ, որոշ տարածություն, մսուրով ու դուռով[6], նախատեսվել է աշխատող եղների համար (նկ. 6)։

Առաջին բաժանմունքի կենտրոնական մասում է տեղավորված հատիկներն անջատող հարմարանքը, որ շինված է հետևյալ կերպ. գետնի երեսին շաղախով միացած քարե սալերով կազմված է բոլորաձև, դոդավոր «տաշտ»-ը. նրա կենտրոնում ամրացված ուղղաձիգ առանցքի վերին մասում հոդավորված է նետ կոչվող մի հորիզոնական ձողափայտ, որի կարճ կողմին հոդավորված է տաշտի մեջ պտտվող քարե մեծաղանգված անիվի նմանող մի գլան՝ քառակը. վերջինս տաշտի մեջ տրորում և անջատում է կտավահատիկները. նետի երկար կողմին լծվում է քառակը պտտեցնող եզը։

Այս բաժանմունքում է տեղավորված մաղելու և բովելու նպատակով խորացված մասեր ունեցող բարձրադիր հարթակը, ուր բարձրանում են քարե աստիճաններով։ Այստեղ, խորշերից մեկում կուտակում են հատիկատրորիչ հարմարանքից ստացված խառնուրդը, որն այնուհետև մաղվում է այլ պահեստախորշի մեջ։ Մաղումից ստացված մնացորդներին հատկացված է մի երրորդ պահեստախորշ։

Մաքրված հատիկները բովում են հարթակի՝ բով կոչվող մեծ խորշի մեջ, որի տակ կրակարան (օջախ) կա։ Բովված հատիկները լցվում են զամբեղների (ճկուն զամբյուղների) մեջ. վերջիններս տեղափոխվում են ձիթհանի երկրորդ բաժանմունքը և դարսվում իրար վրա՝ հատուկ փոսի «դիրք» կոչվող մասում։

Մամլման պրոցեսում զամբեղների դիրքն անփոփոխ պահելու համար հատակի մոտ և ավելի բարձր՝ փոսի պատերի մեջ, հորիզոնական դրությամբ, գերաններ են ամրացված. այդ գերաններից վերինը կոչվում է խայլի (հայելի). սրանց և զամբեղների միջև ուղղաձիգ դիրքով դիմակայիչ է դրվում (դիմադիր), իսկ զամբեղների վրա՝ փայտե վահան (մանդիլ)՝ մամլիչ գերանների ճնշումը հավասարաչափ բաշխելու համար։

Հիշյալ փոսի հատակը սվաղված է և ունի թեքություն՝ դեպի փոսի միջին մասը, ուր թաղված է քամված ձեթը հավաքող կարասը։

---

6 Քարե ջրման անասունների համար։

7 Հավաքված թափթփուկը, որ բելում է կոչվում, օգտագործում են ծածկերի մեջ։

Մամլիչ հարմարանքը մի լծակային ծանր սարք է, բաղկացած ծանր, հաստ գերաններից, կարճ գերաններով կապմված հենարանից, պտուտակային սարքից (պողոսակ) և գերանների հորիզոնական տեղաշարժին դիմակայող ուղղաձիգ սյուներից (ճոճակալներից)։





Նկ. 6. Զիթհան (հատակագիծ և կտրվածքներ)

Երկրորդ բաժանմունքի համապատասխան պանդուսով եղներին իջեցնում են մթնոտուն կոչվող բոլորաձև մասը, նրա կենտրոնում դանվող պողոսակի քարը (մթնոտան քար, կախ քար) պտտեցնելու և այսպիսով ամբողջ մամլիչ սարքը գործողության մեջ դնելու համար։

Պողոսակը պտտվում է գերաններին ամրացված «պողոսակի արջ» կոչվող մասի մեջ, որը հեղույսներով ու երկաթալարերով ամրացած տաշված փայտի երկու կոճղերով է կազմված (սա պողոսակի պտուտակային մակերեսի վրա պնդոզակի դեր է կատարում)։

Լծակային դերանների մեծ բազկի մամլիչ հաստ ծայրը խրված է պատի «օջախ» կոչվող խորշի մեջ՝ դերանների շարժման ուղղաձիգությունն ապահովելու համար։

Ջիթհանի ծածկը սովորական մասերից է բաղկացած։ Առաջին բաժանմունքի ծածկի կենտրոնական մասը փոքր ինչ բարձրացված է դերանների խաչման միջոցով. մամլման բաժանմունքն ունի հարթ, իսկ մթնոտունը՝ եզների պտտման վայրը, գմբեթաձև ծածկ։

Այդ շրջաններում միակ լրիվ պահպանված պայտարանոցը, որ Բասարգեչարում է գտնվում, կառուցված է ախոռի դռան առաջ, նրա ծածկի շարունակությունը կազմող շվաքի՝ ցվիրի տակ։ Այն կազմված է ուղղաձիգ չորս սյուներից, հորիզոնական, անշարժ և պտտվող ձողափայտերից ու նրանց վրա ամրացված ձին պրկելու հարմարանքներից։

Այն ամենը, ինչ մնացել է հին գյուղից, չքանում է մեծ ինտենսիվությամբ. Հնատիպ կառույցներն այժմ կանգնած են մեկուսի, թեպետ տեղ-տեղ երևում են դեռ հարակից շենքերի ավերակները։ Գլխատան ֆունկցիան սահմանափակվել է իբրև հացատուն (խոհանոց) կամ մառան։ Նոր կառուցվող գլխատների ծածկի կառուցվածքին, հետևաբար, մեծ ուշադրություն չի դարձվում։

Նոր կենցաղը փոխում է գյուղի տեսքը. վերացվում են մասնավոր սեփականություն հիշեցնող դռների երկարաձիգ շենքերն ու այլ օժանդակ մասեր, իսկ փոխարենը հանդես են գալիս լուսավոր, օդասուն սենյակներ ու պատշգամբներ, բակեր ու բանջարանոցներ, կատարվում են հատակագծման նոր աշխատանքներ. տնտեսական նոր վերելքի հետ բացվում են նոր հեռանկարներ գյուղացու առօրյան քաղաքակիրթ, առողջ և հետաքրքիր դարձնելու համար։

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին երևան են եկել հարթածածկ բնակելի շենքեր, գլխավորապես երկհարկանի ծավալներով։ Գյուղական վայրերում դրանք հատ ու կենտ են կառուցվել, մինչդեռ Նոր Բայազետում դրանց տոկոսն այնքան զգալի է դարձել, որ առաջացել է քաղաքատիպ բնակավայր՝ ուղիղ փողոցներով։ Բնակավայրը, սակայն, ստեղծվել է այս նոր տիպի շենքերի երևան գալուց առաջ, երբ կառուցվածքների զգալի մասը գլխատներից և այլ հնատիպ կառուցվածքներից էր բաղկացած։ Այդ կառուցվածքները թեպետ չեն պահպանվել. այնուամենայնիվ վստահորեն կարելի է ասել, որ եղել են հար և նման շրջակա գյուղերի համապատասխան շինություններին։

Նոր Բայազետը կառուցվել է 1829 թվականին Հին Բայազետից եկած հայերի կողմից նախկին Գավառ գյուղի տեղում։ Այն գտնվում է Սևանա լճի արևմտյան ափին, նրանից մոտ վեց կիլոմետր հեռու մի զառիվերության մեջ։ Նրա հարավակողմով անցնում է Գավառագետը, որի վրա դեռևս կանգուն է 1867 թվականին Ռ. Ռորոյանի միջոցներով կառուցված քարաշեն կամուրջը։

Գետի ձախ ափին, քաղաքի հարավ-արևելյան կողմում բարձրանում է «Դարի գլուխ» կոչվող բլրաձև առապարը, որն այժմ գերեզմանատուն է, մինչդեռ հնում եղել է ամրոցի վայր։ Այստեղ մի աննշան մատուռի կողքին ամն Ամիր Վասակի 842 (ԲՃՂԱ) թվականին կանգնեցրած խաչքարը ցույց է տալիս բնակավայրի շատ հին լինելը։

Գյուղաքաղաքը չորս մասի է բաժանված եղել, որոնք Բանտի, Կալերի, Տալիգի և Խաչերի թաղեր են կոչվել։

Բանտի թաղը բնակավայրի հարավ-արևելյան մասն է, որտեղ «Կաթնաղբյուր» անվանվող հանրային ջուրն է բխում։ «Քաղաքի այս թաղը ամենահինն

լինելով,— գրել է Ե. Լալայանը,— զուրկ է կանոնավոր, լայն փողոցներից, տների մեծագույն մասն էլ շատ հասարակ և գյուղական է, նոր նոր շինվում են եվրոպական ձևի տներ։ Բավական հաճելի է գետի երկու ափը, ուր բարձրանում են ուռենիներ ու բարդիներ, որոնց հովանու տակ հաճախ թեյ խմելու են գալիս քաղաքացիները»[8]։

Կալերի թաղը հանդիսացել է քաղաքի նորակառույց մասը, այդով, եկեղեցիով, հասարակական և բնակելի շենքերով։ Վերջիններս մեծ մասամբ եղել են միահարկ և հողածածկ կառուցով։ Այս մասում են տեղավորված եղել շուկան և բավականաչափ խանութներ։ Թաղն իր անվանումն ստացել է այն հանգամանքից, որ այստեղ, մինչև քաղաքի կազմավորումը, բազմաթիվ կալեր են եղել։

Տալիզի թաղը կոչվել է 1835—40 թվականների վրացի գավառապետի անունով, այն գտնվելիս է եղել գյուղաքաղաքի հարավ-արևմտյան մասում, ուր հասարակական շենքերի հետ եղել է նաև ոստիկանատունը։

Խաչերի թաղը, որ հյուսիս-արևմտյան կողմում ջրառատ, կանաչապատ օդասուն գրոսավայր է եղել, իր անունն ստացել է այդտեղ գտնվող խաչքարերից։

Քաղաքի նախասովետական շրջանի ճարտարապետական դիմագիծը ժողովրդական է, քանի որ զգալի տոկոս են կազմում բնակելի տները։ Ամենուրեք երևում են պարսպապատ բակեր և դարպասներ, ու նրանց մեջ կամ նրանց շարքում շենքերի դեղաշեն, արևահայաց ճակատներ (նկ. նկ. 7, 8)։

Շենքերի ծավալները կանոնավոր պրիզմայի ձև ունեն, թեև պատահում են նաև Г-աձև հատակագծեր։

Երկհարկանի կավածածկ շենքերի առաջին հարկարաժինը նախատեսված է տնտեսական նպատակների համար. երկրորդ հարկը հատկացվել է ընտանիքի ներքին կյանքին, ընդ որում մեծ սենյակն ընդհանուր նպատակի համար, իսկ նրա շուրջը խմբված մյուս սենյակները՝ որպես ննջարան և հյուրասենյակ։ Բացվածքներն ուղղված են դեպի հարավ, հարավ-արևելք և արևելք։ Նախկին շուկայի հրապարակի տեղում դեռևս կանգուն է մի տուն, որի առաջին հարկի բաժանմունքները խանութներ են։

Հարկերի միջև հաղորդակցությունը կատարվել է մեծ մասամբ բաց աստիճաններով, իսկ սենյակների դռները բացվել են կամ բակային պատշգամբի, կամ նախամուտքի վրա. երբեմն հանդիպում են միջանցիկ սենյակներ, գլխավորապես ընդհանուր նպատակների հատկացվող։

Առաջին՝ մառան կամ մարագ հանդիսացող հարկի մուտքը եղել է բակից կամ դալանի (փողոցից բակ տանող միջանցք) միջից։

Դեպի փողոց են դուրս գալիս շենքերի հարթ ճակատները, որոնց ճարտարապետական մշակմանը տրված է շեշտված նշանակություն. նրանք ունեն քարի և սվաղի համակցմամբ ստեղծված ճաշակավոր համադրվածքներ, լուսամուտների ռիթմիկ դասավորությամբ, ջլատվածքների հաճելի համամասնություններով և մանրամասների գուսպ հարդարանքով։ Միափեղկ լուսամուտները բնակելի մասում ուղղանկյուն կամ կամարակապ բացվածքներ ունեն, մինչդեռ կիսանկուղային հարկերի լուսամուտները իրենց չափերով անհամեմատ փոքր են և գտնվում են առաստաղին մոտիկ։

---

8 Ե. Լալայան, Նոր Բայազետ գավառ, «Ազգագրական հանդես», 18-րդ գիրք, 1908, էջ 112։



Նկ. 7. Բնակելի տուն Կամո քաղաքում

Բակային ճակատները ևս զուրկ չեն հարդարանքից. այստեղ սակայն պատի մշակման վրա քիչ ուշադրություն է դարձված, մինչդեռ պատշգամբներն այդ ֆոնի վրա ունեն շքեղ կերպարանք։ Այս ճակատներն առաջնային նշանակություն են ստանում, եթե շենքը փողոցից հեռու է։ Զգալի տոկոս են կազմում ապակեպատ պատշգամբները։

Նկ. 8. Բնակելի տան լուսամուտ

Գյուղական վայրերի հարթածածկ բնակարանների կառուցվածքները համապատասխանում են Նոր Բայազետի համապատասխան շենքերի ճարտարապետական ոճին։ Նրանց մասին կարելի է ասել միայն, որ կառուցվել են գլխատան կոմպլեքսում և երբեմն հանդիսանում են վերջինիս հատակագծի սրդանական մասը։ Աչքի են ընկնում նրանցից մի քանիսի դռներն իրենց ներարվեստ հորինվածքով (նկ. նկ. 9, 10)։

Յուրօրինակ ճարտարապետությամբ, ոճերի բազմազանությամբ աչքի ընկնող վերոհիշյալ կառուցվածքների շինարարական տեխնիկան շատ բարդ չի եղել։ Օգտագործվել են ավանդական սերնդից սերունդ փոխանցված կառուցման եղանակներ, որոնք համապատասխանել են տեղական շինանյութերին։ Գյուղացին սովոր է եղել իր տան շինարարությունն անձամբ կատարել ընտանիքի կամ

գերդաստանի անդամների մասնակցությամբ։ Առանձին քարագործ, կամ հյուսն վարպետներ օգտագործվել են այն դեպքերում, երբ տան տերը կամեցել է իր շինությանը երևելի տեսք հաղորդել։ Նշանավոր ատաղձագործ է եղել Ասաղաձոր գյուղից Մխիթարյան Ավետիսը, որը մեծ համբավ է ունեցել Թբիլիսիում իրրև փայտյա մասերի դրվագման հմուտ վարպետ։ Նկար 10-ում ցույց տրված դուռը նրա ստեղծագործությունն է։



Նկ. 9. Գյուղական տուն քաղաքատիպ մասերով

Օգտագործված շինանյութերն այնքան էլ բազմազան չեն։

Գլխատան համար իրրև շինափայտ գրեթե միշտ օգտագործվել են կաղնափայտի գերանները, որոնք ձեռք են բերվել Թարթառի ձորից (Քյալբաջար), իսկ եղեզը՝ Սևանի ափից, Բասարգեչարի մերձակայքում։ Բեյումը՝ ձիթհանի թափթփուկը, առատ տեղական շինանյութ է եղել և ծառայել է որպես ջերմամեկուսիչ և խիտ ենթաշերտ՝ վերին շերտերի (հարդ, հող) պահպանման համար։

Հարթ կտուրների հողն պաշտպանիչ ծածկաշերտը խտացնելու համար դլանաձև լողի փոխարեն այս շրջաններում ծածկի վրա գնդաձև մի ծանր քար են գլորում։

Կաղնափայտե գերանները ծածկի մեջ դրվել են քիչ թե շատ մշակված դրությամբ, հարթեցվել են կացնով և ուրագով. նույնիսկ հանդիպում են գլխատներ, որոնց առաստաղի գերաններն ունեն ձևավոր փորվածքներ և համապատասխանաբար ուղղանկյան կտրվածք։

Փայտի մշակումը կատարվել է շատ նախնական եղանակներով, առաջներում աշխատել են որքան հնարավոր է խուսափել սղոցված փայտի օգտագործումից. շատ անգամ տախտակի դեր են կատարել ճեղքված և ուրագով հարթեցված գերանների շերտերը։

Դուռը փայտե տախտակներով կազմված միափեղկ մի վահան է, որի շրջանակը սեպերով ամրացվում է բացվածքի մեջ՝ փորը ինչ թեք դրությամբ. այս միջոցառումն ապահովում է դռան հեշտ փակումը։ Դռան փայտամասերի միացման համար մետաղական հարմարանքները երևան են եկել ավելի ուշ, մինչդեռ առաջ փայտե մեխեր էին օգտագործում։

Պատերը բարձրացվել են տեղական անմշակ որձաքարով ու հարդախառն կավաշաղախով։ Նրանց հիմքերը խորացվել են գրունտի ամրության համապատասխան, այնուամենայնիվ ոչ շատ խորը։ Ընդամենը մի մուրճ և մի մալա կազմել են պատշարի գործիքների կոմպլեքսը։ Պատերը սվաղվել են միայն գլխատան ներսում, երբեմն նաև մառաններում։ Սվաղի շերտը հարդախառն կավից է եղել, որը հաճախ սպիտակացվել է հատուկ կավի (կաոլին) սպիտակ լուծույթով։

Պատերն ու առաստաղը պարբերաբար մաքրվել են փոշուց ու մրից, պատերը սպիտակացվել են, իսկ կտուրի հարթ մասերը լրացվել կավի շերտով և անձրևից հետո գլանվել քարով։

Հարթ կտուրով շենքերի ծածկանյութերը նույնն են, ինչ գլխատան կառուցվածքներինը. այնուամենայնիվ նրանց այստեղ երևան գալու հետ խոշոր փոփոխություններ են կատարվել շինարարական տեխնիկայի ու ճարտարապետության զարգացման տեսակետից։ Այդ իր արտացոլումն է գտել ճակատների



Նկ. 10. Գյուղական հարթածածկ տան բանդակազարդ դուռ

մշակման նոր ձևերով, սրբատաշ քարի հանդես գալով՝ իբրև ամբողջ պատ կամ առանձին գոտիներ, ֆիվեր, եղրակալներ, ջրհորդաններ, բարավորներ, գետնախարիսխներ (ցոկոլներ), անկյունաքարեր և այլ հարդարման մասեր, հատակի, առաստաղի, ներքին ձևավորման առաջադեմ սկզբունքների լայն օգտագործմամբ, հակաերկրաշարժային փայտե գոտիների կիրառմամբ, պատշգամբների փայտյա մասերի խելամիտ կառուցվածքներով ու դրվագմամբ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Լճափնյա շրջանների բնակավայրերը բնական-կլիմայական, քաղաքական-պատմական, սոցիալ-տնտեսական պայմանների ու տեղական ավանդությունների անմիջական ազդեցությամբ, ստացել են հատակագծման տեսակետից յուրօրինակ տեսք և ներկայացնում են ամենատարբեր կառույցների խիտ զանգված, թեև կառուցապատման մեջ կատարված է նրանց տեղի ընտրություն և թեքությունների հաշվառում։

2. Բնակելի կոմպլեքսի առանձնահատուկ և նշանակալից մասերն են հացատներն ու գոմերը, առաջինի հազարաշեն, բրգաձև և խառը տիպի և երկրորդի օրորոցաձև ծածկերն ու նրանց տարբերակները։

3. Այս շրջանները հարթածածկ բնակելի շենքերի հարդարման տեսակետից նկատելիորեն հարուստ են շնորհիվ Նոր Բայազետի նման տնտեսական ու մշակութային կենտրոնի, որն իր կնիքն է գրել ամբողջ շրջանի որմնագործության և ընդհանրապես ճարտարապետության վրա։

4. Հարթածածկ բնակելի շենքերն ունեն տվյալ բնակավայրի համար լավագույն կողմնորոշում, մեծ մասամբ երկու հարկ, որոնցից առաջինը տնտեսական և երկրորդը բնակելի մասն է կազմում։ Նոր Բայազետում (այժմ Կամո) նրանց ցանկապատերն ու դարպասները, քարի և սվաղի համակցմամբ ստեղծված ճակատների ճաշակավոր համադրվածքներն ու պատշգամբները որոշակի դեր են կատարում բնակավայրի կառուցապատման համար։

Չափագրությունների և դիտումների հիման վրա կատարված այս ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս ասելու, որ Սևանա լճի ավազանում հայկական ժողովրդական ճարտարապետության կառուցվածքների ոճային ընդհանրությունների հետ տեսանելի են տիպարների ու նրանց հարդարանքի բազմազանության, զարգացման դարավոր ճանապարհ անցած շինարարական տեխնիկա և արվեստ, որոնք չնայած իրենց որոշ նախնականությանը, որոշակի արժեք են ներկայացնում մշակույթի և պատմության համար։

Ոճային և կառուցվածքային առկա յուրահատկությունները հիմք են տալիս այս շրջանների ճարտարապետությանը հատկացնել առանձին տեղ ժողովրդական ճարտարապետության ընդհանուր պատմության մեջ։